ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է օգոստոսի 15-ին, 1968թ. Երևանում:

<u>Կրթությունը՝</u>

1985-1992թթ.	ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբական բաժին (ստացել է արաբերեն և հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ, թարգմանիչ մասնագիտություն)
1993թ.	ԵԱՀ ԱԳՆ կից դիվանագիտական ակադեմիա, Կահիրե
2003թ.	Ջորջ Մարշալի անվան կենտրոն, Գարմիշ-Պարտենկիրխեն

1987-1989թթ. ծառայել է խորհրդային բանակում:

<u>Աշխատանքային գործունեությունը՝</u>

1994-1995 թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի կցորդ

1995-1997 թթ. Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսության երրորդ քարտուղար

1997-1999 թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի երկրորդ քարտուղար

1999-2001 թթ. Լիբանանի Հանրապետությունում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար

2001-2002 թթ. Սիրիայի Արաբական Հանրապետությունում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար

2002-2004 թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի երկրորդ քարտուղար, բաժնի վարիչի պարտականությունների կատարող

2004-2005 թթ. ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչության Ամերիկայի և Կանադայի բաժնի առաջին քարտուղար

2005-2006 թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի վարիչի պաշտոնակատար

2006-2009 թթ. Սիրիայի Արաբական Հանրապետությունում ՀՀ դեսպանության խորհրդական

2009-2011 թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի վարիչի պաշտոնակատար

2011-2014 թթ. Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս
2014-2018 թթ. Իրաքի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան

Պարգևներ՝

2013թ. ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով:

Դիվանագիտական աստիճան՝

Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար

Օտար լեզուների իմացություն՝

Արաբերեն, ռուսերեն, անգլերեն

Ընտանեկան կարգավիճակ՝

Ամուսնացած է, ունի մեկ դուստր և մեկ որդի:

ՀՀ նախագահի հրամանագրով 2018թ. նոյեմբերի 20-ին նշանակվել է Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Կահիրե):